



Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՖ. Լ. ԱՃԱՌՅԱՆ

Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց*

Գ Լ Ո Ւ Խ Յ Ո Ր Ե Ր Ո Ր Գ

ԶՈՐՐՈՐԴ ՔԱՐՈԶԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Լուսավորություն հունանայոց)

§ 1

Մեսրոպ մի ժամանակ Վաղարշապատում Սահակի մոտ մնալուց հետո, հրաժեշտ տվեց նրան և շորրորդ անգամ ճանապարհ ընկավ ուսուցանելու Հայաստանի գանազան գավառներում:

Դժբախտաբար Կորյուն մանրամասն չի պատմում Մեսրոպի այս շորրորդ քարոզչական գործունեության առաջին մասի հանգամանքները, և բավականանում է ընդհանուր կերպով հիշելով, թե ման եկավ Հայաստանի բոլոր գավառները և ամեն տեղ լցրեց Ավետարանի քարոզությամբ. «Ապա դարձնալ ելանէր շրջէր գտեղհօք, և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց, զուարթացուցանել, նորոգել, հաստատել: Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս՝ լի առնէր զսուրբ անտարան Տեսուն և ամենեցուն զգուշացուցնալ զկենաց ճանապարհն վարելոյ...» (Կորյուն, էջ 16):

Եթե հավաքենք Կորյունի տված տեղեկությունները Մեսրոպի քարոզչական գործունեության մասին, կտեսնենք, որ նրա առաջին, երկրորդ և երրորդ քարոզչության ասպարեզը դարձան Փայտակարան, Գողթն, Սյունիք և Վրաստան, ապազային պիտի տեսնենք Աղվանք, Բաղասական, Գարդման, Դուզարք, որոնք բոլորը գտնվում են Հայաստանի հյուսիսային մասում: Միջնաշ-

խարհը (Այրարատ) հանձնված էր Սահակին, Հունահայաստանի երկու նահանգները՝ Բարձր Հայք և Մոփր Մեսրոպի քարոզչական գործունեության ասպարեզ պիտի դառնան այս շորրորդ ուղևորության շրջանում: Իսկ ո՞ւր են Հայաստանի մյուս նահանգները՝ Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք և Վասպուրական: Զարմանալի է, որ Կորյուն խոսում է միշտ հյուսիսի և հետո էլ արևմուտքի մասին, իսկ արևելքի և հարավի մասին ո՛չ մի տեղեկություն չի տալիս: Արդյոք Կորյունի զբոսը մասնա՞ր են պակաս, թե համառոտ լինելու համար զանց է արել այդ մասերը, ինչպես ինքն էլ ասում է. «Զյաճախադոյնն թողեալ և ի նշանադիմակացն քակելով զհամառօտսն կարգեցաք... քանզի շէաք իսկ հանդուրժողք զամենայն արարեալսն կտակաւ (կարդա գտակաւ «մանրամասն») զիրարանշիրսն, այլ ի դիւրազոյն և ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատըսպարեցաք, որոյ անցնալ զբազմախոտն արգասեօք սրբոցն (իմա՞ սրբոյն), առ ի մանրակրկիտ աննելոյ զկարեւորագոյնս պատմելոյ՝ զհանգամանս ասացաք: Եվ կամ արդյո՞ք նա պատմում է ո՛չ այն դեպքերը, որ լսելով միայն դիտե, այլ որ ինքն էլ տեսնել է անձամբ և արքայակ ու մասնակից է եղել, ինչպես ինքն էլ ասում է. «Ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն և առնթրեալկաց հոգևորական գործոց և լսող շնորհապատում վարդապետութեանն և նսդին արրանեակ»: Եւ

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № № XI-ից, XII-ից, 1955 թվականի № № I-ից, II-ից, III-ից, IV-ից, IX-ից և 1956 թվականի № № I-ից, II-ից և IV-V-ից:

Այս վերջին կարծիքը ավելի հավանական է թվում:

§ 3

Սահակի և Մեսրոպի ժամանակագրությունը պատմելու ժամանակ (դրսի տասնվեցերորդ), մենք պիտի տեսնենք, որ Մեսրոպի երկրորդ և երրորդ քարոզչական գործունեությունը ընկնում է 405—409 թվերին: Զորքորդ քարոզչական գործունեությունը (Հունահայք) տեղի ունեցավ 420 թվին: Ինչ է անում Մեսրոպ այն 11 տարին: Այդ ծայրահեղ եռանդուն մարդը լուռ նստած է վաղարշապատում: Ո՛չ Ահա այդ միջոցին է, որ նա ման է գալիս իր հայրենի նահանգը Տուրքերբան (Տարոն), ապա Աղձնիք, Մոկր, Վասպուրական, անշուշտ նաև Պարսկահայք, որոնց մասին ոչինչ չի խոսում Կորյուն, որովհետև ինքը նրա հետ չէր, այլ ընդհանուր խոսքերում ասում է. «շրջէր գտնեցօր կարգելեօք և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց... ընդ ամենայն տեղիս...»:

§ 2

Մեսրոպ մինչև այն ժամանակ քարոզել էր Արևելյան, այսինքն պարսից զերիշխանության տակ գտնված Հայաստանի դավաճանում: Իր բաց արած բոլոր դպրոցներն էլ այդ բաժնումն էին գտնվում: Իսկ Արևմտյան Հայաստանը, որ սոսկ հպատակ էր հունաց պետության, գուրկ էր մնացել կրթական այդ մեծ շարժումից: Արևմտյան հայերը ստիպված էին ըստ խորենացու, կրոնապես հպատակվել Կեսարիայի աթոռին և հետևաբար կրթվել հունական լեզվով ու դրականությամբ: «Հրամանաւ Վասմշապէոյ և Մեծին Սահակայ՝ ժողովեալ (Մեսրոպայ) մանկունս ընտրեալս, ուղեղս և քաջասունս, փափկաձայնս և երկարոգիս, և դպրոցս կարգեաց յամենայն դաւառս և ուսոյց դրեաւ կողմանս բաժնոյն Պարսից՝ բայց ի Յունաց մասէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալ յաթոռն Կեսարու, վարել յունական դպրութեամբ և ոչ ասորով (խորենացի, Գ ծղ):

Վերջապես Մեսրոպ մտածեց Հունական Հայաստանն էլ մտցնել իր քարոզչական գործունեության շրջանակի մեջ և անցնելով այդ բաժինը՝ հայերենի ուսումը ծավալել նաև այնտեղ: Ուստի իր հետ առնելով բազմաթիվ աշակերտներ, ճանապարհ ընկավ դեպի Հունական Հայաստան: «Խորհուրդ առնոյր այնուհետև վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թաղաւորին Հոռոմոց: Եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերտօք բազմօք անցանել ի կողմանս Յունաց» (Կորյուն, էջ 16):

Հունահայոց քարոզչության վրա խոսում են միայն երկու պատմագիր՝ Կորյուն և Խորենացի (վերջինիս են հետևում Թովմա Արծրունի, Վարդան պատմիչ և Կիրակոս): Այս երկուսն էլ բավական ընդարձակ պատմում են այս քարոզչության հանդամանքները, և թեև ընդհանուր գծերի մեջ իրար հետ համաձայն են, բայց մանրամասնությանց մեջ շատ են շեղվում իրարից:

Այսպես, խորենացին ո՛չ թե Մեսրոպին է տալիս գիմել Հունահայաստան, ինչպես Կորյունն է անում, այլ Սահակին, միայն իր հետ ընկերակից առնելով նաև Մեսրոպին: Ըստ խորենացու, Վասմշապուհ թագավորի մահից հետո, Սահակ անձամբ գնում է պարսից Հազկերտ թագավորի մոտ և խնդրում է բանտարկյալ ու դահազուրկ Խոսրով Գ թագավորին երկրորդ անգամ Հայաստանի թագավոր նշանակել: Հազկերտ ընդունում է Սահակի խնդիրը. բայց Խոսրով միայն մի տարի թագավորելուց հետո՝ մեռնում է: Այս ժամանակ Հազկերտ՝ պարսկականությունը հայոց մեջ տարածելու մտադրությամբ՝ փոխանակ նոր հայ թագավոր նշանակելու, իր Ծապուհ որդուն ուղարկում է Հայոց երկիրը: Ծապուհ թագավորում է չորս տարի, բայց միշտ նախապնդելով ու արհամարհելով հայ նախարարներին, այնպես որ երբ լսում է, թե Հազկերտը մեռել է, անմիջապես թողնում է իր աթոռը և փախչում Պարսկաստան: Հայերը ներսես Ճիճրակացու առաջնորդությամբ հարձակվում են պարսկական բանակի վրա, սպանում զորապետին և զորքը կոտորում: Հայաստան երեք տարի մնում է անիշխանության մեջ և ամեն բարեկարգություն խանգարվում: Մյուս կողմից պարսից նոր թագավորը՝ Վառն Բ ուզում է վրեժ լուծել հայերից: Այս անկարգություններն ու խռովությունները առնելով, Սահակ թողնում է պարսկական բաժինը, և ավելի հանգստության համար գիմում է Հունական բաժինը: «Իսկ իրքև ետես մեծն Սահակ դայն ամենայն չարիս ի մասինն Պարսից, գնաց նա զկողմամբք արևմտից մերոյ աշխարհիս ի բաժին մասինն Յունաց» (խորենացի, Գ ծղ):

Խորենացու հետևորդ Փոքր-Կորյուն այստեղ մի փոքր շեղում է անում: Ըստ իրեն Սահակի և Մեսրոպի Հունահայաստան գիմելը ո՛չ թե հատկապես լուսավորության գործի համար էր, այլ Ս. Գրքի թարգմանության համար: Հայաստանում հունարեն Աստվածաշունչ չկար, որովհետև Մեհրոբյան բոլորը այրել էր և պարսիկները հունարեն սովորել արդեն էին: Սահակ և Մեսրոպ

ուզում էին հունարենից թարգմանել Աստվածաշունչը, ուստի ստիպված եղան Հունաց բաժինն անցնելու. «Ձի ի բաժանել զաշխարհս Հայոց՝ շտաշին Պարսկաց վերսկացուքն յոյն ումիւր ուսանել զգլխութիւն իւրեան մասին, այլ միայն ասորիս Վասն որոյ յոյժ տարակուսեալ լինէին սուրբ Հայրապետքն Սահակ և երանելին Մեսրոպը. և զնացին զկողմամբ արեւմտից վիճակին իւրեանց ի մասն Յունաց» (էջ 13): Բայց թիւ փոքր-Կորյունի այս պատմութիւնը սուտ հերյուրանք է՝ հայտնի է նաև նրանից, որ մի քիչ հետո ինքն էլ է մոռանում իր ասածը և ո՛չ միայն Ս. Գիրքը չի թարգմանվում, այլև Մեսրոպ Հունահայոց քարոզութիւնից զարժին՝ Հայաստանումն էլ դռնում Սահակին և հաշիվ է տալիս նրան իր արածների համար, մինչդեռ իր հետ Հունահայոց բաժինը անցած պիտի լիներ:

Մինչդեռ Կորյուն Մեսրոպի համար ասում է, թե հունահայոց եպիսկոպոսներից, իշխաններից, զավառապետներից և մանավանդ Անատոլիս սպարապետից մեծ պատվով ընդունվեց՝ հյուսիսային կողմերում արած իր մեծամեծ քարոզութիւնը և իր հունած մեծ համբավի պատճառով, ընդհակառակը խորհնացին ցույց է տալիս, թե Սահակ ո՛չ թե միայն իր արժանավորութիւն համեմատ պատիվ չտեսավ պաշտոնավորներից, այլ նաև արհամարհանք դրած, հույն պաշտոնավորները չընդունեցին Հայոց կաթողիկոսին, շիթեցին, որ նա քարոզեր հայոց մեջ, վերջապես արգելեցին նրան հայերենի ուսումը տարածել իրենց բաժնում: Ահա վասիկ Կորյունի և հետո խորհնացու խոսքերը. «Եւ վասն առաւելագոյն բարեգործ համբաւուցն յառաջագոյն զմասնէ անդ ի հիւսիսական կողմանց հռչակելոց, առաւել միամտութեամբ ընտանեալ յեպիսկոպոսաց աշխարհին, և յիշխանաց և ի զաւառականացն պատուեալ, մանաւանդ ի սպարապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անատոլիս ի մօտ հանապարհին» (Կորյուն, էջ 16).— «Եւ ոչ ըստ արժանեաց իւրոց եղև ընկալեալ... և ոչ հանդիպեցաւ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերականգնուացս սոցա. այնչափ ատեցեալ զմեզ, մինչև զնշանադիրս անգամ ոչ ընկալան...» (խորհնացի, Գ ծէ):

Անցողակի նկատենք այստեղ, որ Հունահայաստանի սպարապետի անունն է Կորյունի երկու ձևադրերից մեկի մեջ Անտիոխ. մյուսի մեջ՝ Անտիոս: Այս երկուսը միևնույն բաներն են. սկզբում գրված է եղել Անտիոխ, որի մեջ ու հնչւոթյամբ կարելի էր շփոթել և դարձնել ս, իսկ խ կորցնելով մի թերթի լինում է իւ Բայց Անտիոխ շատ հետին հնչում է.

ուստի պետք է ուղղել Անտիոխ կամ Անտիոնոս: Սա սովորական անուն էր հունաց մեջ, Հնագույն անձն է այս անունով Անտիոքոս որդի Հերակլիսի, ապա Անտիոքոս ծովակալ Ալեկրիակի, նույնանուն մի քանի Սիկիլյան թագավորներ, և ուրիշ անձինք՝ հիշված Հերոդոտի և Քսենոփոնի մոտ: Մեր շրջանից էլ մի երկու օրինակ տալու համար՝ հիշենք Կոստանդ կայսեր զորավար Անտիոքին, որ իր բանակով եկավ Հայաստան և Խոսրով Բ-ին զահ բարձրացրեց (խորհնացի, Գ և—դ): Խորհնացու մեջ Հունահայոց սպարապետը կոչվում է Անատոլիոս, որից անցել է նաև Փոքր-Կորյունին: Վենետիկի հրատարակիչները հետեւելով խորհնացուն՝ Մեծ Կորյունի Անտիոսն էլ սրբադրել են Անատոլիս: (Այս մասին տե՛ս Халатянц, «Арм. Арменакиды», հայ թրգմ. «Հանդէս Ամսօրեայ», 1940 թ., էջ 261ա, ծան. 2): Իսկ Յնտոլյան իր հրատարակութեան մեջ գրել է Անտիոխ: Ապա Թորոսյան («Բաղմավէպ», 1931 թ., էջ 470) և Ակինյան («Հանդէս Ամսօրեայ», 1935 թ., էջ 531) գտնում են, որ այն ժամանակի Հունահայոց սպարապետն էր իւրոք Անատոլիոս, որ նստում էր Անտիոք քաղաքում: Դա արեւելյան բանակի հրամանատարն էր, որ հույներից կոչվում էր ի ռիշ Յապրապետ, որ էլ յատինեքն militum per Orientem magister: Անատոլիոս ըստ Պրոկոպիոսի 421—422 թվին խաղաղությամբ վերջ տվեց պարսից և հռոմայեցից միջև ծագած պատերազմին: Նույն թվին հյուրընկալեց պարսից ասպահապետին, որ Վամ Ե-ի հալածանքներից էր փախել: Ավելի քան 30 տարի վարել է սպարապետութիւն պաշտոնը, և Մարկիանոս կայսեր ժամանակ էլ կենդանի էր դեռ, ինչպես հիշում է Փարպեցին (նոր տպ. էջ 74):

Ըստ այսմ սխալ է դուրս գալիս Կորյուն և ստույգ է դուրս գալիս խորհնացին: Բայց խկույն եւթ ավելացնենք, որ Կորյունի համապատասխան տեղը եղծված է. «Մանաւանդ ի սպարապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անտիոխ (=Անտիոք) ի մօտ հանապարհին»: Վերջին երկու բառերը ո՛չ մի իմաստ չունեն և ցույց են տալիս, որ այստեղ բնագիրը խաղաղված է: Եղել են զանազան փորձեր ուղղելու համար, բայց իզուր: Օրինակ Ակինյան («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 530) ի մօտ հանապարհին կարդում է «ի Դերբան զաւառին». Թորոսյան («Բաղմավէպ», 1931 թ., էջ 471) ուղղում է «անուանեալ կոչէր Անատոլիս» ի քաղաքին Անտիոք. խոստանայր լինել ձեռնտու հանապարհին: Ստույգ է, որ Կորյունի մոտ էլ էլ Անատոլիս սպարապետի անունը, որ հետո ընկել է, իսկ Անտիոխ նրա բնակած քաղաքի անունն է:

Խորհնացին այսպես է շարունակում իր պատմութիւնը.— Երբ Սահակ տեսավ այն

ցուրա ընդունելությունը հունաց պաշտոնյաների կողմից, ստիպվեց Մեսրոպին և իր թուվարդան Մամիկոնյան նախարարին ուղարկել Բյուզանդիոն՝ հունաց Թեոդոս կայսեր մոտ, նրանից արտոնություն և թույլտվություն խնդրելու համար: Նրանց հանձնեց երեք նամակ. մեկը Հունահայոց Անատոլ զորավարին, ճանապարհորդության ձեռնտվության համար, երկրորդը Պոլսի Ատտիկոս պալատական եպիսկոպոսին՝ կայսեր բարեխոսելու համար, և երրորդը Թեոդոս կայսեր՝ բուն խնդրի համար: Խորենացին (Գ ծ է) մեջ է բերում Հիշյալ երեք նամակները, որոնք ահա.

Ն ա մ ա կ Ա.

Թուրք Սահակայ առ Թեոդոս

Նազադասիրի կայսեր տեսն իմում Աւգոստոս Թեոդոսի՝ Սահակ Հայոց եպիսկոպոսի Տէր խնդալ:

Դիտեմ, դի համբաւ նեղութեանս մերոյ հասնալ է ի ներող խողովին ինքնակալիդ սակս որոյ յուսալով ի դիմաժոյթին բարերարութեանդ քոյ, դիմեալ ապաւինեցայ յոտս ձեր. և ոչ հանդիպեցայ ընդունելութեան չիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա, այնչափ ատեցեալ զմեզ, մինչև զնշանագիրս անգամ ոչ ընկալան, զորս երբ նոյն այր՝ զոր առաքելի առ ձեր բարերարութիւնդ, բազում անգամ ձգեալ զորս յԱտրուց աշխարհին: Արդ հաճոյ թուեցի տէրութեանդ ձերում՝ որ անիշխան առնել զմեզ ի մերում վիճակիս, և հրամայել ընդունել զմեզ և զվարդապետութիւնս մեր: Ողջ լի:

Ն ա մ ա կ Բ

Թուրք Սահակայ առ Ատտիկոս

Սահակ եպիսկոպոս Հայոց, վարդապետ մեր Ատտիկոս աշխարհամուտ դրանդ, օրհնութեամբ ողջոյն:

Յուսացեալ ի ձեր սրբութիւնդ առաքելի զուառացող մերոյ աշխարհիս Մեսրոպ, և զթոռն իմ վարդան, որպէս զի ի լսել քո ի դոցանէ զաղէտս նեղութեան մերոյ, բարեխոսեալ առ մեծ թագաւորիդ՝ օգնեցես մեզ, որպէս արդարեւ եղբայր սիրելի: Ողջ լի:

Ն ա մ ա կ Գ

Թուրք Սահակայ առ Անատոլիոս

Սահակ եպիսկոպոս Հայոց, քաջի զօրավարի Անատոլիայ խնդալ:

Շնորհ ունիմ Աստուծոյ յաղագս զբեզ պատրաստել մեզ յաւիտեանութիւն. վասն որոյ զգացուցանեմ՝ զի ի հայթայթանս մերոյ նեղութեանս առաքելի զուառացող մեր զՄեսրոպ և զթոռն իմ վարդան ի դուռն արքունի. և աղաչեմ զքո քաջութիւնդ ձեռնառու լինել ճանապարհիդ: Ողջ լի:

Հիշյալ նամակներից պարզ երևում է, թե Սահակի Հունահայաստան դիմելու բուն նպատակը ո՛չ թե ուսման տարածումն էր, այլ ավելի մի ապավեն գտնել այն երկրում իր անձի ազատության և հանգստության համար: Սահակի այս փախուստին պատճառ են եղել (խորենացու խոսքով) ներսես Ճիճրակացու ապստամբությունը և Հայաստանի հոռմյա անիշխանությունը: Բայց միթե կարելի էր սպասել, որ Սահակի պես անձնվեր մի հայրապետ, փոխանակ նեղ օրերում Հայաստանում մնալու և անիշխանության շրջանում հայոց գլուխ և առաջնորդ կանգնելու, թողներ երկիրը և իր անձնական հանգիստը փնտրելով փախչեր Արևմուտք: Նաև ի՞նչ է նշանակում անիշխանություն. չէ՞ որ Հայաստանի համար այս վիճակը ավելի ազատ անկախություն էր, քան թե իշխանությունը, երբ այս իշխանության արտաքին փայլի տակ՝ Հայաստանը ուրիշ բան չէր ներկայացնում, եթե ոչ հլու հպատակ մի կուսակալություն: Դարձյալ Ճիճրակացու ապստամբությունը, որ այնպես շուտ հասավ իր նպատակին, այն է կոտորել պարսից բանակը, այնպիսի տագնապալից մի վիճակ ստեղծած չպիտի լիներ երկրում, որ կաթողիկոսը ստիպվեր թողնել ու փախչել. այլ ընդհանրապես կարճ պատերազմից հետո տված պիտի լիներ երկրին խաղաղություն: Փարսեցին թեև զիտե խոսքով Գ-ի և Շապուհ արքայորդու թագավորությունը և խորենացու ավելի ընդարձակ հիշում է Հաղկերտի մտադրությունները այս առթիվ, բայց Շապուհի փախուստից հետո չի դնում Հայաստանում նապատամբություն և պարսկական բանակի կոտորած, այլ շատ խաղաղ կերպով նշում է, թե Վռամ թագավորեց պարսից, որին դիմելով հայ նախարարները՝ Արտաշես Գ նշանակվեց թագավոր հայոց:

Այս շրջանի ղեպերի մասին ստույգ տեղեկություն տալիս են մեզ մի քանի ասորի պատմիչներ, որոնց ամփոփումը տե՛ս Ակինյան, «Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 476:

Համաձայն այս տեղեկությունների, այդ միջոցին Պարսկաստանի քրիստոնեության դեմ մեծ հալածանք էր սկսվել: Որմիզդ-Արտաշիր քաղաքում մի ասորի քահանա անխոհեմություն էր ունեցել մի ատրուշան այրելու: Սրա վրա մոգերը գրգռվելով՝ դրդել էին Հաղկերտ Ա-ին ընդհանուր հալածանք հանելու քրիստոնեության դեմ: Նահատակվեց Արդա՝ նույն քաղաքի ասորի եպիսկոպոսը (420 թ.): Այդ միջոցին Պարսկաստան էր գնացել Սահակ կաթողիկոսը՝ հայտնի չէ ի՞նչ նպատակով: Հավանաբար, ըստ Ակինյանի, գնացել էր խնդրելու Հաղկերտից, որ Հայաստանի գահի վրա թագավորեցնի Արտաշես Գ-ին:

Սահակ բարեխոսեց Հազկերտի մոտ և խնդրեց, որ վերջ տա քրիստոնյաների հալածանքին: Հազկերտ զիջեց և հալածանքը վերացրեց: Մի քանի ամիս հետո (420 թվի աշնան) Հազկերտ սպանվեց և նրա տեղ դահ բարձրացավ Վրամ եւ Սահակ՝ որ զեռ Տիգրանուն էր, խնդրեց Վրամից և հավանություն ստացավ պապիկո Արտաշեսին՝ թագավորական թագով:

Այս հանգամանքները նկատի առնելով՝ կարող ենք հետեցնել, թե Սահակ Հռոմահայտաւան չէր գնացել և թե հետևաբար խորհնացու աված տեղեկությունը անտեղի է: Ճիշտ է Կորյունի պատմությունը, որի համաձայն միայն Մեսրոպ զնաց Հռոմահայտաւան, միակ նպատակ ունենալով հաշերեն դպրությունը տարածել այնտեղ:

Թեև հակասություն կա, ինչպես վերը ցույց տվինք, Կորյունի և խորհնացու պատմածներին մեջ՝ հունաց կողմից ցույց արված ընդունելության մասին, բայց այս հակասությունը առերևույթ է ձևական է միայն: Մեսրոպի համարվել իրոք ամեն կողմ տարածված լինելով՝ հունահայոց եպիսկոպոսները, իշխանները, զավառապետներն ու նույնիսկ սպարապետը սիրով ընդունեցին նրան, ցույց տվին հարկավոր պատիվները, բայց այս բոլորը միայն Մեսրոպի անձի ու աստիճանի համար էր: Այնպես որ երբ Մեսրոպ առաջագրեց իր բուն նպատակը, այն է՝ դպրոցների բացումն ու հաշկական դպրության տարածումը, Անատոլիոս ստիպվեց կանգնեցնել Մեսրոպի ցանկությունը, մինչև որ իմաց տար կայսեր և արտոնություն ստանար: Այս կետում համաձայն են թե՛ Կորյուն և թե՛ խորհնացին:

Մնում է ճշտել, թե արդյոք ստույգ են Սահակին վերագրված այն երեք նամակները: Կորյուն այնպիսի թղթեր չի հիշում. անկարելի է նաև, որ խորհնացու մեջ բերած թղթերը լինեն իսկական օրինակները, բանի որ անհավանական է կարծել, թե խորհնացին կարողանար ձեռք բերել դրանք. ուստի պետք է ընդունել, որ պատմագիրը իրանից է շարադրել ենթադրաբար: Նամակների պարունակությունը, այն է Հայաստանի ճգնաժամը, Սահակի նեղությունը և հունահայոց մեջ ապավին փնտրելը՝ արդեն անստույգ դեպքեր են, ուստի քնականաբար նամակների գոյությունն էլ դառնում է անստույգ: Կարող էր Սահակ հանձնարարական թղթեր տալ Մեսրոպին՝ Անատոլիոսի, զվաճվոր եպիսկոպոսի և այլ անձերի հասցեով, բայց այս թղթերը անշուշտ մեջ բերվածներից բավական տարբեր պիտի լինեին: Թովմա Արծրունին, որ այստեղ ըստ ամենայնի խորհնացու հետևողն է, գիտե հինգ թուղթ և հինգ պատասխան:

Ահա իր բառերը. «Մեկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէլ զսուրբ վարդապետան...»: Այս տարբերությունը անշուշտ Թովմայի սխալն է, որի վրա ծանրանալ ավելորդ է:

§ 4

Այսպես ուրեմն Անատոլիոս պատվով ընդունեց Մեսրոպին, խոստացավ սուրհանդակներով լուր ուղարկել Պոլիս՝ Թեոդոս կայսեր, հայոց վարդապետի մասին. «Չայս տեսալ Անատոլիայ (այսինքն Սահակի հանձնարարական թուղթը), միանգամայն և զլուր տուաքինութեանն Մեսրոպայ լիշեալ, որ յառաջագոյն հնչեցեալ էր զնմանէ, ոչ փոքր արար նոցա ընդունելութիւն, մինչև ի ձեռն փոփոխ ընթացից (—միշտ փոխվող ձևերով սուրհանդակ) զրով զգացուցանել կայսերն» (խորհնացի, Գ ծէ): «Որ զիրս առաջի եղեալ զրով՝ ցուցանէր կայսերն, որում անուն Թէոդոս կոչէին, որդի Արկադու կայսեր» (Կորյուն, էջ 16):

Կոստանդնուպոլսից. հրաման ստացավ Անատոլիոս՝ փութով ուղարկել Մեսրոպին պալատ՝ արժանի պատիվներով. «Անուն հրաման՝ արժանապէս առաքել փութով» (խորհնացի, Գ ծէ): Ըստ Կորյունի շնորհից նաև Մեսրոպին ակումբա տրուողոր. «ուստի և հրաման ելանէր, վաչկուշ մեծարանօք զսուրբն՝ ակումբա անուն կոչելոյս»:

Թեոդոս կայսրը դահ էր բարձրացել 408 թվին, երբ զեռ հինգ տարեկան մանկիկ էր: 414 թվին ծերակույտը պետական վարչությունը հանձնել էր մանուկ թագավորի քրոջ՝ Պուլքերիային: Հետևաբար Մեսրոպին տրված արքայական հրամանը Պուլքերիայի կողմից էր հատկապես:

Մեսրոպ իր հետ վերցրեց Հայաստանից բերած աշակերտների բազմությունը և նրանց հետ իջավ Մելիտինե (այժմ Մալաթիա) հունական քաղաքը: Այստեղ աշակերտներին հանձնեց Մելիտինեի առաջնորդ եպիսկոպոսին, նրանց զվաճվոր նշանակելով Ղևոնդես հասուն աշակերտին, որին Կորյուն կոչում է «այր հաւատարիմ և ճշմարտապաշտ»:

Մելիտինեի առաջնորդ եպիսկոպոսի անունն է Ակակիոս՝ թե՛ ըստ Կորյունի և թե՛ ըստ խորհնացու. «Տարեալ ի քաղաքն Մելիտինացոցն, յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին» (Կորյուն): «Ի քաղաքին Մելիտինէ... առ եպիսկոպոսին Ակակայ թողու» (խորհնացի, Գ ծէ): Այս առթիվ մի հետաքրքիր նկատողություն կա «Բազմավէպ»-ի 1897 թվի էջ 605-ում: Պատմությունից հայտնի է, որ

Ատտիկոս՝ Պոլսի պատրիարքական աթոռը նստավ 405—425 թվերին, իսկ Ակակիրոս Մելիտինեի եպիսկոպոս էր 431—438 թվերին ինչպես կարելի է բացատրել այս ժամանակագրական անտեղությունը: Մեր կարծիքով, եթե ճիշտ է Ակակիրոսի թվականը (Ատտիկոս պատրիարքի մասին կասկած չկա), բացատրությունը հետևյալն է: Կորյուն իբրև ժամանակակից չէր կարող սխալվել անվան մեջ ուստի սխալը հորենացուն է: Արդեն եթե Ակակիրոս 431-ին նստավ և 438-ին մեռավ, չէր կարող այն միջոցին Մելիտինեի աթոռը գահակալել, քանի որ Մեսրոպ մեռել է 439-ի սկիզբը և Մելիտինեից անցած պիտի լինի 420 թվին: Կորյունի նախնական օրինակում չի եղել եպիսկոպոսի անունը. հորենացին է, որ գտել և մտցրել է այն իր պատմության մեջ, որից հետո մի նոր գրիչ ավելացրել է Կորյունի բնագրի մեջ «որ Ակակիրոսն կոչեին»:

Իմ այս ենթադրությունը կարելի է ապացուցել հետևյալ ձևով: Մեկի անունը տալու ոսկեդարյան ձևի մասին ընդարձակ խոսում է Նորայր, իր «Կորյուն վարդապետ» աշխատության մեջ: Ըստ Նորայրի՝ ոսկեդարյան հեղինակները սովորաբար ասում են «որում կոչեին, որում անուն կոչե, որ կոչե, որում անուն, որում անուն կոչեին»։ բացի սրանցից Կորյուն, Բյուզանդ և այլն սիրում են գործածել նաև «որոյ անունն հանաչե» (11 անգամ գործածված Կորյունի խմբի մեջ):

Կորյունի գրքի մեջ կատարելով մի ընդհանուր վիճակագրություն այս մասին, գտա 31 վկայություն, որոնք բաժանվում են 10 ձևի (չենք ըստ վենետիկի 1894 թվի հրատարակության)։

1. Որոյ անունն հանաչե Սահակ (էջ 16)։
Որոց գլխավորին Երեմիա անուն հանաչե (էջ 42)։

2. Որոյ անուն կոչե Վառժապուհ (էջ 17)։
Որոյ անուն կոչե Անանիաս (էջ 24)։
Որոյ անուն կոչե Գինթ (էջ 27)։

3. Որ և Վարդկան կոչե (էջ 23)։

4. Որոյ անուն Հարել կոչեին (էջ 17)։

Որոյ առաջնոյն Յովհան կոչեին և երկրորդին Յովսէփ անուն (էջ 19)։

5. Որում անուն Արտաշէս կոչեին (էջ 30)։
Որում անուն Երեմիա կոչեին (էջ 30)։

Որում անունն Յովնաթան կոչեին (էջ 31)։

6. Որում Թէոդոս կոչեին (էջ 27)։

Որում Ղևոնդէոսն կոչեին (էջ 27)։

Որում Ատտիկոս կոչեին (էջ 27)։

Որում Մուշեղ կոչեին (էջ 31)։

Որում Խուրս կոչեին (էջ 31)։

7. Որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիրոս (էջ 18)։

Որոց առաջնումն Տիրայր անուն... և երկրորդին Մուշէ անուն (էջ 24)։

Որում Թէոդոս անուն (էջ 40)։

Որոց առաջինն Սամուէլ անուն (էջ 26)։

Որոց առաջինն Յովսէփ և երկրորդն այլ աշակերտ Յովհան անուն (էջ 46)։

8. Որ առաջնոյն Ենովք անուն էր և երկրորդին Դանուն (էջ 30)։

Որ էր Վաղինակ անուն (էջ 24)։

Որ և Ղևոնդէս առաջնոյն անուն էր և երկրորդին Կորիմս (էջ 33)։

9. Որոց առաջնոյն Վարդան անուն էր (էջ 23)։

Որում Արսվաղ էր անուն (էջ 30)։

Որում անուն էր Բակուր և եպիսկոպոսի աշխարհին Մովսէս (էջ 25)։

10. Որ անուանեալ կոչե Ջաղայ (էջ 25)։

Որ անուանեալ կոչե Անատոլիս (էջ 27)։

Որ անուանեալ կոչե Աշուշայ (էջ 32)։

Որ անուանեալ կոչե Դուստր (էջ 42)։

Այս բոլոր 31 ձևերից զուրս և միակ բացառություն կազմող ձևն է վերոհիշյալ «որ Ակակիրոսն կոչեին», որ հայերեն դառնալու համար պետք է ուղղել «զոր Ակակիրոսն կոչեին», իսկ Կորյունի լեզու դառնալու համար՝ «որում Ակակիրոսն կոչեին»։

Այսպիսով հաստատվում է, թե հետին գրչի հավելում է։

Այս Ակակիրոս եպիսկոպոսի մասին խոսում է նաև Ակինյան («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 531) և ասում է հետևյալը: Ս. Եվթիմեոսի վարքի համաձայն արդեն 390 թվին Ակակիրոս Մելիտինեի եկեղեցու պաշտոնյաներից էր, ծաղմամբ՝ ինչպես կարծվում է, աղնվական ընտանիքից. հմուտ էր եկեղեցական և արտաքին գիտությունց: Մելիտինեի Օտրեոս եպիսկոպոսը նրա խնամքին էր հանձնել Եվթիմեոսին: Թե ո՞ր թվից դարձավ եպիսկոպոս՝ հայտնի չէ: Անձամբ ծանոթ էր Պոլսի Նեստոր պատրիարքի հետ՝ ջանաց հետ կիցնել նրան իր զաղափարներից (430 թ.)։ անդամ էր Եփեսոսի ժողովին (431 թ.)։ Ավելի ուշ պիտի տեսնենք, թե նա գրեց զգուշացուցիչ թղթեր Սահակին, Մեսրոպին և հայ նախարարներին (435 թ.)։ Մահվան տարին հայտնի չէ, բայց 449 թվին արդեն մեռած էր, որովհետև այդ թվին Եփեսոսի ժողովին մասնակցում էր Մելիտինեի Կոստանդիանոս եպիսկոպոսը:

(Շարունակելի)